ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

27 մարտի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

36
(3245)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ՝ ԳԻՇԵՐՎԱ ՆԱԽԱՐԱՐ

...ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը, ինչպես փոխանցում են կառավարական աղբյուրները, շարունակում է մնալ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ամենավստահելի ու «անփոխարինելի» նախարարներից մեկը: Թեեւ նրա առողջապահական կառավարման տարիները վատ հիշողություններ են արթնացնում, եւ նրան մի շարք գործիչներ «մահվան նախարար» են անվանում, ամեն դեպքում Թորոսյանը ՔՊ-ի ակտիվ կերպարներից մեկն է:

«Ժողովուրդ» օրաթերթի կառավարական աղբյուրների փոխանցմամբ՝ անգամ այն պայմաններում, երբ Փաշինյանն ունեցել է տարաձայնություններ Թորոսյանի տարբեր քրեական պատմությունների մասով, էլի շարունակել է նրան պահել իր թիմում՝ գնահատելով նրա աշխատունակությունն ու արձագանքման արագությունը: Առանց այն էլ ՔՊ-ում կադրային լուրջ խնդիրներ կան, եւ Արսեն Թորոսյանի նման արագաշարժ պաշտոնյան խիստ գնահատելի է նրա կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթին նաեւ փոխանցեցին հետաքրքիր մանրամասն. վարչապետը, իր աշխատանքային ոճին հավատարիմ, հաճախ նախարարներին նամակներ է ուղարկում նույնիսկ ուշ գիշերին: Նույն աղբյուրների պնդմամբ՝ հենց Թորոսյանն է այն նախարարներից մեկը, որն առավել հաճախ պատասխանում է այդ նամակներին՝ երբեմն նույնիսկ գիշերվա ժամը 3-4-ին:

Երեկ ՀՀ կառավարությունը, չզեկուցվող հարցերի թվում, հաստատեց որոշում, որով 31.5 մլն դրամ մաքսատուրքից ազատման արտոնություն տրամադրվեց «ՖՈՒԴ ԴԵՊՈ» ՍՊԸ-ին (Food Depot LLC)՝ գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակում ներմուծվող սարքավորումների, հումքի եւ նյութերի համար: Կառավարությունը որոշել է. «Բավարարել «ՖՈՒԴ ԴԵՊՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի եւ (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար եւ սահմանված կարգով կիրառել համապատասխան արտոնությունը»: Ընկերության տնօրենը Հրանտ Գրիգորյանն է: Սակայն բաց աղբյուրներով վերջնական շահառու սեփականատերերի ամբողջական ցանկը հասանելի չէ: Փաստացի պարզ չէ՝ ովքեր են ընկերության վերջնական շահառուները, որոնք ստանում են պետական արտոնությունը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ Արման Պետրոսյանի՝ պաշտոնը ստանձնելու օրվա դրությամբ ներկայացված հայտարարագիրը, ինչպես նաեւ նախորդ տարիների տվյալները, երբ նա զբաղեցնում էր ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալի պաշտոնը, եւ պարզել մի շարք ուշագրավ հանգամանքներ: Հիշեցնենք, որ Արման Պետրոսյանը մինչեւ այս պաշտոնին նշանակվելը զբաղեցրել է ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալի պաշտոնը, որից ազատվել է 2023 թվականի սեպտեմբերի 26-ին վարչապետի որոշմամբ: Քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալի պաշտոնը նա ստանձնել է 2025 թվականի փետրվարի 4-ին: Պաշտոնը ստանձնելու օրվա դրությամբ Պետրոսյանը հայտարարագրել է մեկ անշարժ գույք՝ Կոտայքի մարզի Ձրվեժ համայնքում գտնվող հողամաս, որը համատեղ սեփականություն է եւ ձեռք է բերվել 2018 թվականին՝ գնման եղանակով: Տրանսպորտային միջոց նա չի հայտարարագրել:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը երեկ կառավարության նիստում քննադատել է հայաստանյան բնակարանաշինության մշակույթը՝ անդրադառնալով բարձր պարիսպների երեւույթին: Նա նշել է, որ տարիներ շարունակ ձեւավորված մտածողությունը խնդրահարույց է. «Մենք ընկալել ենք, որ պարիսպից ներս մերն է, պարիսպից դուրս մերը չէ»: Այսինքն՝ բարձր պարիսպները լավ բան չեն, պետք է մարդիկ քանդեն, ազատվեն այդ բաժանարար գծերից: ArmLur.am-ը արբանյակային հնարավորություններով ճշտեց, որ Արարատ Միրզոյանն իր գնած առանձնատան պարիսպները չի քանդել, ցանցավանդակների չի վերածել: Հիշեցնենք, որ Միրզոյանը 2022-ին ձեռք է բերել առանձնատուն շուրջ 280 հազար ԱՄՆ դոլարով, որը նույնպես ունի բարձր պարիսպներ: Ստացվում է հակասական պատկեր. մի կողմից բարձրաստիճան պաշտոնյան քննադատում է հասարակության մեջ տարածված ճարտարապետական ու սոցիալական վարքագիծը, մյուս կողմից անձամբ շարունակում է օգտվել նույն մոդելից՝ բարձր պարիսպներով առանձնացված բնակավայրից: Մինչդեռ քաղաքական ուղերձները առավել համոզիչ են, երբ դրանք սկսվում են հենց հեղինակներից:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԱԶԴԱԿՆԵՐ՝ ՎԱԽԻ ԵՎ ՃՆՇՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

ArmLur.am-ը զրուցել է ՀՀ ԱԺ անկախ պատգամավոր Հովիկ Աղազարյանի հետ:

-Պարոն Աղազարյան, Ձեր դիտարկմամբ, այս պահին իշխող ուժի քարոզարշավն ինչպե՞ս է ընթանում, կա արդյոք վարչական ռեսուրսի կիրառում:

-Օնլայն ռեժիմով անմիջականորեն չեմ հետեւում, բայց տեղեկատվական դաշտում հետեւում եմ: Վարչական ռեսուրսի հնարավոր օգտագործումը, իհարկե, բնորոշ է յուրաքանչյուր իշխանության համար, ու սահմանը միշտ շատ դժվար է գնահատել: Կարեւոր է հասկանալ, որ նման քայլերի նկատմամբ հասարակությունը զգայուն է ու դրանց գնահատումը միշտ հարաբերական է:

-Իսկ ինչպե՞ս կմեկնաբանեք Փաշինյանի այն հայտարարությունը, որ եթե ինքը չընտրվի, սեպտեմբերին պատերազմ կլինի:

-Ակնհայտ է, որ իրական պատերազմի վտանգը կարող է առաջանալ միայն Ադրբեջանի նախաձեռնությամբ՝ կոնկրետ նպատակների հետապնդմամբ: Ալիեւը, օրինակ, չի ցանկանա պատահական զոհեր ունենալ իր երկրում, պատերազմը պետք է ինչ-որ ստացված արդյունք ապահովի՝ փախստականների վերադարձ, սահմանային հարցերի լուծում եւ այլն: Եթե Փաշինյանը ընտրվի, Ալիեւը նման հաղթանակ կստանա առանց իրական ռազմական գործողությունների: Հետեւաբար, այս հայտարարությունները խոսում են քաղաքական մանիպուլյացիայի մասին՝ վախի եւ ճնշման միջոցով ընտրազանգվածին ուղղված ազդակներ:

-Վերջերս մեծ արձագանք ստացավ նաեւ քաղաքացիների հետ նրա պահվածքը, այդ թվում՝ փոքրիկ երեխայի ներկայությամբ, ինչպե՞ս եք սա գնահատում:

-Նման դեպքերը, երբ հանրային պաշտոնյան նսեմացնում է քաղաքացիներին, իսկ առավել եւս՝ երեխայի ներկայությամբ, խորապես անընդունելի են: Այս դեպքում ոչ միայն անձնական, այլեւ մարդկային կողմն է խախտվել:

-Ինչպե՞ս է ընթանում համապետական ընտրությունների նախապատրաստությունը, արդյոք մրցակցությունն արդար է:

-Ընդհանուր առմամբ, մրցակցությունն անհավասար է ոչ միայն իշխանության եւ ընդդիմության, այլեւ ընդդիմության ներսում: Օրինակ, հիմնական մրցակիցներից Սամվել Կարապետյանը կալանքի տակ է, սակայն իր ղեկավարած ուժը շարունակում է քարոզչական աշխատանքը: Նման իրավիճակում գնահատելը բարդ է, բայց օրենսդրության պայմաններում այս պրոցեսը շարունակում է ընթանալ:

-Ձեր քաղաքական թիմը կմասնակցի՞ ընտրություններին եւ ի՞նչ դաշինքների հետ:

-Մենք որոշումը կկայացնենք մոտ 10 օրվա ընթացքում՝ փորձելով միավորել ուժերը, բայց առանց պարտադիր ձեւաչափի: Եթե տեսնենք, որ մեր մասնակցությունը կարող է օգտակար լինել, պատրաստ ենք ներգրավվել, հակառակ դեպքում չենք մասնակցի: Մեր դիրքորոշումը հաշվարկված է եւ հիմնված է այն ընկալման վրա, որ մենք դեռ շատերի համար դիտարկվում ենք որպես Փաշինյանի պրոյեկտ, ուստի նախաձեռնողականությունը մեր կողմից համակողմանի չէ:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԱՆԱՄՈԹԱԲԱՐ

ՀՀԿ խոսնակ Էդուարդ Շարմազանովը ֆեյսբուքյան գրառում է կատարել.

«Ի՞նչ Ստալին, այ փորձանք. նա ո՞ւր էր, երբ Ռ.Պատկանյանը «Վարդապետարան Հայաստանի ազատիութեան» գործն էր գրում: Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ, նսեմացնելով հայ ազգային գաղափարախոսությունն ու ազգային նահատակությունը, անամոթաբար մեր հայրենասիրության մոդելի հեղինակ է հռչակում Ստալինին: Չժխտելով Ստալինի պատմական դեմք լինելու հանգամանքն ու նրա ծանրակշիռ դերը Երկրորդ աշխարհամարտի հաղթանակում, որն, ի դեպ, արձանագրել ու բարձր են գնահատել թե ԱՄՆ-ի նախագահ Ֆրանկլին Ռուզվելտն, ու թե Մեծ Բրիտանիայի վարչապետ Ուինսթոն Չերչիլը, այնուամենայնիվ նշեմ, որ հայոց հայրենասիրության մոդելը եղել է թե մինչեւ ԽՍՀՄ-ի ստեղծումը եւ թե դրանից հետո:

Արդյո՞ք ծանոթ է Փաշինյանը Ռափայել Պատկանյանի, Ռաֆֆու, Գարեգին Նժդեհի, Հայկ Ասատրյանի, Հովհաննես Քաջազնունու, Լեւոն Շանթի եւ այլոց աշխատություններին: Կարծում եմ՝ ոչ: Կամ եթե նույնիսկ ծանոթ է, ապա չի ընկալել, քանի որ հակառակ պարագայում դժվար թե նման անգրագետ բան հայտարարեր ԱԺ ամբիոնից: Իսկ եթե նպատակը եղել է ստվեր գցել ու նսեմացնել Խորհրդային Հայաստանի հայրենասիրության մոդելի վրա, ապա պետք է նշեմ, որ այստեղ եւս թերացել է: Խորհրդային Հայաստանում 1943-ին բացվեց Գիտությունների ազգային ակադեմիան, զարգացավ հայագիտությունը: Հատորներով հայագիտական ու պատմագիտական գրականություն էր հրատարակվում: Բացվեց Սարդարապատի հուշահամալիրը, որը խորհրդանշում էր հայ ժողովրդի 1918-ի մայիսյան փառավոր հաղթանակը զավթիչ թուրքերի նկատմամբ: Ի վերջո, Խորհրդային Հայաստանը ստեղծվեց որպես մոտ 800 հազար բնակիչ ունեցող գյուղատնտեսական երկիր, իսկ 1980-ականների վերջին Խորհրդային Հայաստանն արդյունաբերական երկիր էր ու 3.5 մլն բնակչությամբ հանրապետություն էր: Հերիք է նսեմացնեց Խորհրդային Հայաստանում կայացած սերնդի դերը: Այդ սերունդը կերտեց Հայոց Երրորդ Հանրապետությունն ու Արցախյան շարժումը: Այդ սերունդը Շուշի է ազատագրել, որը դու հանձնել ես: Դու ատում ես ոչ թե Ստալինի «ժառանգությունը», այլ մեր Երրորդ Հանրապետությունն ու Արցախյան հերոսամարտը: Բայց դու պարտվելու ես: Պարտվելու ես, ու Հայկը կհաղթի ոսոխ բելին»:

ՎԵՐԱԾԵԼ ԱՆԻՐԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ

«Ուզում եմ բոլորին հիշեցնել, որ Արարատ լեռը գտնվել է Հայաստանի տարածքում մինչեւ այն պահը, երբ իշխանության եկավ Դաշնակցությունը»: Այս մասին մարտի 26-ին Ազգային Ժողովի նիստում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի ընտրության հարցի քննարկման ժամանակ հայտարարել է խորհրդարանի փոխխոսնակ, կառավարող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Ռուբեն Ռուբինյանը:

ԱԺ փոխխոսնակի խոսքով՝ հենց Դաշնակցությունն է կորցրել վերոհիշյալ լեռը: Ընդ որում՝ ոչ միայն Արարատ լեռը, այլեւ Կարսի մարզը: Նա որոշակի զուգահեռներ է անցկացրել 100 տարի առաջվա իրադարձությունների եւ 2020-2023 թվականների միջեւ: «-Դաշնակցության ամբողջ գործունեությունը մի անվերջանալի շղթա է՝ իրական բաները դարձնել ինքնություն, հետո լացել, կենացներ խմել, հայ դատ անել, փող հավաքել ու ինքնությունը վերածել փողի», - ասել է իշխող խմբակցության ներկայացուցիչը՝ փաստացի Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած էթնիկ զտումների պատասխանատվությունը դնելով ԼՂՀ այն ժամանակվա քաղաքական ղեկավարության եւ ՀՅԴ-ի վրա: Ռուբինյանի խոսքով, նրանք վերցրել են իշխանությունը եւ ընդամենը 19 օր անց այդ իրական Լեռնային Ղարաբաղը վերածել ինքնագիտակցության: Պատգամավորի կարծիքով՝ Դաշնակցության գործունեությունն իրականում կայանում է հայրենիքի եւ նրա մասին հիշողության մոնետիզացիայի մեջ:

ԶՈՐԱՀԱՆԴԵՍ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Մայիսի 28-ին Հանրապետության հրապարակում տեղի կունենա ոչ այնքան զորահանդես, որքան հաշվետվություն ՀՀ քաղաքացիներին»:

Այս մասին ճեպազրույցի ժամանակ ասել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ անդրադառնալով դիտարկմանը, թե վարչապետը քաղաքացիների հետ հանդիպումների ժամանակ կարծիք է հարցնում՝ արժե՞ հրապարակային ցուցադրել այն ռազմատեխնիկան, որը վերջին տարիներին է ձեռք բերվել:

«Ընդհանրապես զորահանդեսը շատ նուրբ երեւույթ է եւ կարող է տպավորություն ստեղծել խաղաղության օրակարգից շեղվելու, խաղաղության օրակարգից հրաժարվելու, եւ մենք աշխատում ենք ու շարունակելու ենք աշխատել միջազգային հանրության մեր գործընկերների հետ, ներառյալ տարածաշրջանի երկրների հետ, որպեսզի նրանք որեւէ կերպ չընկալեն դա որպես խաղաղության օրակարգից հրաժարում»,-ասել է Նիկոլ Փաշինյանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԿԱՊ ՉԵՆ ՈՒՆԵՑԵԼ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏ

«Լեւոն Տեր-Պետրոսյանը, Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանը (Հայաստանի երեք նախկին նախագահները՝ խմբ.) եւ նրանց քաղաքական ուժերը ներկայացնում են ում ասես, բացի Հայաստանի ժողովրդից. նրանք Հայաստանի ժողովրդի հետ ոչ մի կապ չեն ունեցել»: Այս մասին մարտի 26-ին լրագրողների հետ զրույցում հայտարարել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Նրա խոսքով՝ ժողովուրդը երբեք չի ընտրել ո՛չ Ռոբերտ Քոչարյանին, ո՛չ Սերժ Սարգսյանին, եւ նրանք երբեք լեգիտիմ ղեկավարներ չեն եղել, իսկ Լեւոն Տեր-Պետրոսյանին ընտրել է մեկ անգամ, դրանից հետո չի ընտրել: «Ղարաբաղի վերջին ներկայացուցիչները, նրանք լեգիտիմություն չեն ունեցել ընդհանրապես: Նրանք ո՞ւմ ներկայացուցիչներ են, ընդհանրապես ո՞ւմ են ներկայացրել, էդ հարցը պետք ա պարզաբանվի»,-նշել է նա՝ հավելելով, որ հենց Լեւոն Տեր-Պետրոսյանն է ներքաշել Հայաստանն ու հայ ժողովրդին այս արկածախնդրության մեջ:

Փաշինյանը հայտնել է, որ իշխանություններն առաջիկա ընտրություններում իրենց կհանձնեն ժողովրդի դատին, ինչպես դա արեցին 2021 թվականին. «Մենք հնազանդաբար կենթարկվենք ժողովրդի ցանկացած որոշման»:

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Ազգային Ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը ԵԱՀԿ գործող նախագահողի կողմից նշանակվել է Հունգարիայում կայանալիք խորհրդարանական ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության ղեկավար: Որպես հատուկ համակարգող եւ առաքելության ղեկավար՝ Սարգիս Խանդանյանը համակարգելու է ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի, ԵԽԽՎ եւ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կարճաժամկետ դիտորդական առաքելությունների աշխատանքները:

Մարտի 24-26-ը Հունգարիայի մայրաքաղաք կատարած աշխատանքային այցի ընթացքում Սարգիս Խանդանյանը հանդիպումներ է ունեցել Հունգարիայում ընտրական գործընթացում ներգրավված պետական հաստատությունների, ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցությունների, Հունգարիայի խորհրդարանի եւ կառավարության ներկայացուցիչների, քաղաքացիական հասարակության եւ լրատվամիջոցների ներկայացուցիչների, ինչպես նաեւ երկարաժամկետ դիտորդական առաքելությունը իրականացնող ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի թիմի հետ:

Հանդիպումների ընթացքումՍարգիս Խանդանյանը ծանոթացել է ընտրությունների նախապատրաստական աշխատանքներին եւ քարոզարշավի ընթացքին: Հունգարիայում խորհրդարանական ընտրությունները տեղի են ունենալու ապրիլի 12-ին:

ԻՆՉ ՈՒՆԻ

27,600 ԴՈԼԱՐ ԿԱՆԽԻԿ ԵՎ ՄԵԿ ԲՆԱԿԱՐԱՆ

ArmLur.am-ը ուսումնասիրել է Վիճակագրության պետական խորհրդի անդամ, ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ Գագիկ Անանյանի՝ 2024 թվականի հայտարարագիրը եւ պարզել մի շարք ուշագրավ տվյալներ: Նա պաշտոնը ստանձնել է 2024 թվականի մայիսի 22-ին:



ArmLur.am-ը պարզեց, որ պաշտոնյան հայտարարագրել է մեկ բնակարան Երեւանում՝ Արաբկիր վարչական շրջանում, որը ձեռք է բերել դեռեւս 2016 թվականին: Տրանսպորտային միջոց նա չի հայտարարագրել:

Ֆինանսական միջոցների մասով ArmLur.am-ը ուսումնասիրեց, որ Անանյանն ունի տարբեր արժույթներով դրամական միջոցներ: Մասնավորապես բանկային հաշիվներում առկա է 445 դոլար, 451 եվրո եւ ավելի քան 2.3 մլն դրամ, իսկ կանխիկ պահվող գումարները կազմում են 27,600 դոլար, 8,250 եվրո եւ 90,000 դրամ:

Եկամուտների մասով պաշտոնյան 2024 թվականին ստացել է ընդհանուր 11,425,331 դրամ: Դրանցից 9,652,955 դրամը աշխատավարձ է ՀՀ վիճակագրական կոմիտեից, 1,030,776 դրամը՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանից, ինչպես նաեւ 741,600 դրամ կենսաթոշակ:

Հայտարարագրից պարզ է դառնում, որ պաշտոնյան ունի զգալի կանխիկ խնայողություններ՝ հատկապես արտարժույթով: Սա առաջացնում է հարցեր՝ ինչ աղբյուրներից են ձեւավորվել այդ միջոցները եւ որքանով են դրանք համադրելի պաշտոնական եկամուտների հետ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԻՐԱՆԸ ԱԿՆԿԱԼՈՒՄ Է

Իրանի արտգործնախարար Սեյեդ Աբբաս Արաղչին հայտարարել է, որ Թեհրանը ակնկալում է, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամները, հատկապես Չինաստանն ու Ռուսաստանը, կդատապարտեն ԱՄՆ-Իսրայելական գործողությունները եւ կկանխեն ԱՄՆ-ի կողմից խորհրդի հնարավոր չարաշահումները: Այս մասին Արաղչին նշել է Չինաստանի արտգործնախարար Վան Ի-ի հետ հեռախոսազրույցի ընթացքում՝ քննարկելով երկկողմ հարաբերություններն ու տարածաշրջանային զարգացումները: Իրանի ԱԳ նախարարը շեշտել է, որ տարածաշրջանում առկա լարվածության հիմնական պատճառը ԱՄՆ-ի եւ Իսրայելի գործողություններն են՝ հավելելով, որ Իրանը շարունակելու է պաշտպանել իր ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը:

Արաղչին անդրադարձել է նաեւ Հորմուզի նեղուցի իրավիճակին՝ նշելով, որ դրա անվտանգությունը անբաժան է տարածաշրջանային զարգացումներից: Նրա խոսքով՝ նեղուցում առաջացած լարվածությունը պայմանավորված է արտաքին ռազմական գործողություններով, իսկ Իրանի քայլերը համապատասխանում են միջազգային իրավունքին:

Նա նաեւ հայտնել է, որ նեղուցը փակ է ԱՄՆ-ի եւ «ագրեսիային մասնակցող» կողմերի նավերի համար, մինչդեռ այլ երկրների նավերի անցումը կատարվում է Իրանի համապատասխան մարմինների համաձայնեցմամբ:

Չինաստանի ԱԳ նախարար Վան Ին իր հերթին վերահաստատել է Պեկինի դիրքորոշումը՝ դատապարտելով Իրանի դեմ իրականացվող «անօրինական գործողությունները» եւ ընդգծելով միջազգային իրավունքի ու դիվանագիտության կարեւորությունը հակամարտությունների կարգավորման հարցում:

ԶԳԱԼԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Պետք է շնորհակալություն հայտնեմ Աֆղանստանի, Թուրքմենստանի, Ադրբեջանի, Հայաստանի, Թուրքիայի եւ նույնիսկ Սաուդյան Արաբիայի կառավարությունների համագործակցության համար՝ իրանցիների տեղափոխման հարցում: Այս մասին հայտարարել է Իրանի ԱԳ նախարար Աբբաս Արաղչին:

«Մեր հարեւանները, այդ թվում՝ Պակիստանը, նույնպես զգալի աջակցություն ցուցաբերեցին»,- ասել է նա:

ԱՐԱՂՉԻՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼ Է

Իրանի արտգործնախարար Սեյեդ Աբբաս Արաղչին հայտարարել է, որ Թեհրանը չի վարում որեւէ բանակցություն եւ շարունակում է «դիմադրության» քաղաքականությունը:

Նրա խոսքով՝ թեեւ տարածաշրջանի մի շարք երկրների արտգործնախարարներ կապ են հաստատել Իրանի հետ, երկրի դիրքորոշումը մնում է «սկզբունքային եւ անփոփոխ»: Արաղչին նաեւ նշել է, որ միջազգային երաշխիքները վստահելի չեն, եւ Իրանը ապավինում է սեփական «պատժիչ գործողություններով ստեղծված զսպման մեխանիզմին»:

Նա ընդգծել է, որ առանց հստակ երաշխիքների հրադադարը կարող է հանգեցնել նոր պատերազմի, եւ «թշնամին պետք է դաս քաղի»: Միաժամանակ, Արաղչին քննադատել է տարածաշրջանում ԱՄՆ ռազմաբազաների առկայությունը՝ նշելով, որ դրանք ոչ թե ապահովում են անվտանգություն, այլ հակառակը՝ վտանգի աղբյուր են դառնում ընդունող երկրների համար:

Իրանի արտգործնախարարը նաեւ հայտնել է, որ Հորմուզի նեղուցը փակ է թշնամիների համար, սակայն բաց է բարեկամ երկրների՝ այդ թվում Չինաստանի, Ռուսաստանի, Հնդկաստանի, Իրաքի եւ Պակիստանի համար:

Արաղչին Իրանի պատասխան գործողությունները բնութագրել է որպես երկրի պատմության «ոսկե պահ»՝ պնդելով, որ հակառակորդները չեն հասել իրենց նպատակներին եւ այժմ արդեն խոսում են բանակցությունների մասին՝ ինչը, նրա խոսքով, վկայում է նրանց ձախողման մասին:

ՄԵՐԺԵԼ Է

Լիբանանյան «Հեզբոլլահ» շարժման առաջնորդ Նայիմ Քասեմը մարտի 25-ին իր անունից տարածված հեռուստատեսային ուղերձում հայտարարել է, որ ռազմական գործողությունների պայմաններում Իսրայելի հետ բանակցությունները հավասարազոր են պարտադրված հանձնվելուն: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին հաղորդում է France 24-ը:

Քասեմը նաեւ Իսրայելի դեմ միասնության կոչ է արել: Նա ընդգծել է, որ «Հեզբոլլահ»-ի զինյալները պատրաստ են շարունակել Իսրայելի դեմ պայքարն՝ «առանց սահմանափակումների»:

«Հեզբոլլահ»-ը Լիբանանը ներքաշել է Իրանի դեմ ամերիկա-իսրայելական հակամարտության մեջ՝ մարտի 2-ին հարվածներ հասցնելով Իսրայելին՝ ի աջակցություն Թեհրանի: Իսրայելը պատասխան ռազմական գործողություններ է սկսել Լիբանանի դեմ՝ հայտնելով, որ թիրախավորում է խմբավորման ենթակառուցվածքները: Լիբանանում իսրայելական հարվածների զոհերի թիվը գերազանցել է 1000-ը, 1 միլիոն մարդ տեղահանվել է:

Իսրայելն ավելի վաղ հայտարարել է, որ երկրի բանակը կգրավի Լիբանանի հարավային շրջանները՝ մինչեւ Լիտանի գետն ընկած հատվածը, եւ պաշտպանական բուֆերային գոտի կստեղծի:

ԱՆԴՐԱԴԱՐՁԵԼ Է

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ՝ ԱՐՏԱՀԱՏԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ

Գլխավոր դատախազությունը, անդրադառնալով անչափահաս Ռոբերտ Ռուբենյանին սպանելու մեջ մեղադրվող Տիգրան Մաթեւոսյանի բարեկամների կողմից կազմակերպված ցույցին եւ լրատվամիջոցների ներկայացուցիչներին տված հարցազրույցին, հայտնում է.

«2024 թվականի նոյեմբերի 8-ին անչափահաս Ռոբերտ Ռուբենյանին սպանելու մեջ մեղադրվող Տիգրան Մաթեւոսյանի եւ այլոց վերաբերյալ քրեական գործը դատարան է հանձնվել 2025 թվականի օգոստոսի 7-ին:

Չանդրադառնալով քրեական գործի ամբողջ բովանդակությանը, նշենք, որ ցուցարարների բարեկամ Տիգրան Մաթեւոսյանը, խմբի կազմում գործող հանցակիցներ Արման Մաթեւոսյանի եւ Լյովա Մանուկյանի հետ, իր մոտ գտնվող դանակով հարվածել է անչափահաս Ռոբերտ Ռուբենյանի կրծքավանդակին, որի արդյունքում անչափահաս Ռոբերտ Ռուբենյանը մահացել է:

Տեղեկացնենք նաեւ, որ նախաքննության ընթացքում կատարված քննչական գործողություններով՝ տուժողների, վկաների, մեղադրյալների ցուցմունքներով, դեպքի վայրի զննության արձանագրություններով, տեսագրությունների զննություններով, փորձագիտական եզրակացություններով հիմնավորվել է մեղադրյալների հանցավոր գործողությունները, իսկ վկաների, տուժողների ցուցմունքների արժանահավատ լինելը գնահատվել է ձեռք բերված այլ ապացույցների համատեքստում, այլ ապացույցների հետ համակցության մեջ:

Քրեական վարույթի նախաքննությամբ բացահայտվել են ապացուցման ենթակա բոլոր հանգամանքները, ձեռք բերված ապացույցները գնահատման են ենթարկվել վերաբերելիության, թույլատրելիության, հավաստիության տեսանկյունից եւ դրա արդյունքում ստացված հանցանքի կատարումը վկայող փաստերի առկայության պայմաններում մեղադրյալները ձերբակալվել են եւ վերջիններիս ներկայացվել է մեղադրանք, որպիսի գործողությունների իրավաչափ լինելը եւ ներկայացված մեղադրանքի հիմնավոր կասկածի առկայությունը հաստատվել է նաեւ դատարանների կողմից՝ վերջիններիս նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին ներկայացված միջնորդությունները քննության առնելիս»:

ԼՈՒՐԵՐ

ՎԻՐԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՅՐ ՈՒ ՈՐԴԻ ԵՆ

Մարտի 26-ին ավտովթար է տեղի ունեցել Լոռու մարզում: Ժամը 11:20-ի սահմաններում Սպիտակ-Գյումրի ավտոճանապարհի 15,5 կմ հատվածում բախվել են «Volkswagen» մակնիշի ավտոմեքենան եւ «Ուրալ» մակնիշի բեռնատարը: ArmLur.am-ը դեպքի վայրում էր:

Ինչպես հայտնում է Shamshyan.com-ը, վթարի հետեւանքով 2 հոգի, որոնց առաջինն օգնության են հասել քաղաքացիները եւ օպերատիվորեն ժամանած «Սպիտակ» բժշկական կենտրոնի շտապօգնության բժիշկների հերթապահ խմբերը, տեղափոխվել են «Սպիտակ» բժշկական կենտրոն: Բժիշկները վիրավորներին մինչեւ հիվանդանոց տեղափոխելը տեղում առաջին բուժօգնություն են ցուցաբերել: Օպերատիվորեն ժամանել են ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության Լոռու մարզի գումարտակի պարեկները՝ գումարտակի ծառայության ավագ տեսուչ Արման Սուքիասյանի գլխավորությամբ: Դեպքի վայր են ժամանել նաեւ ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության Վանաձորի եւ Գյումրու ծառայողները:

Վթարի մասին ՊԾ Լոռու մարզի գումարտակից տեղեկությունը փոխանցել են ՀՀ Քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Սպիտակի քննչական բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ:

Վթարի փաստով քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզում են վարորդների եւ վիրավորների ինքնությունը: Հնարավոր է՝ նախաձեռնված քրեական վարույթը փոխանցվի ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորի քննչական բաժին:

Ֆոտոլրագրողը հայտնում է, որ «Ուրալը» հաշվառված է ՀՀ ՊՆ N զորամասի հաշվեկշռում, իսկ բախման հետեւանքով էլ «Volkswagen»-ը դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ հայտնվել դաշտում:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ վիրավորները հայր ու որդի են:

ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ԲՌՆԱԳԱՆՁԵԼ

Հակակոռուպցիոն դատարանը վարույթ է ընդունել Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը:

Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի տնօրեն Արգամ Նորայրի Հովսեփյանից (քրեական վարույթով՝ լիազորությունները կասեցված) եւ նրան փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- Երեւան քաղաքում գտնվող 5 անշարժ գույք, որոնցից 2-ը՝ Կենտրոն վարչական շրջանում.
- 1 տրանսպորտային միջոց.
- 162 միլիոն 812 հազար դրամ, որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում, փոխանցվել է բարեխիղճ ձեռքբերողի կամ հնարավոր չէ նույնականացնել եւ բռնագանձել՝ հիմք ընդունելով «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումը.
- 135.297 դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդ:

ԲԵՐՄԱՆ ԵՆ ԵՆԹԱՐԿՎԵԼ

Երեկ Վանաձորի համայնքապետարանից մեկ տասնյակ աշխատակիցներ են բերման ենթարկվել: Հակակոռուպցիոն կոմիտեից հայտնեցին, որ նրանցից մի քանիսը ձերբակալված են՝ առանց հստակեցնելու, թե քանի հոգին եւ ինչ մեղադրանքով: Այս մասին փոխանցում է «Ազատությունը»: Իրավապահները Գույքի կառավարման եւ եկամուտների հավաքագրման բաժնի 11 աշխատակիցների են տարել դեռ 2023-ին հարուցված քրեական գործի շրջանակներում: Վաղ առավոտյան իր տնից բերման է ենթարկվել նաեւ նույն բաժնի նախկին պետ Արմեն Այվազյանը: Թե ինչ կարգավիճակ ունեն բերման ենթարկվածները, Հակակոռուպցիոնից ասացին՝ ավելի ուշ կհայտնեն: Հակակոռուպցիոնի քննիչներն ավելի քան երկու տարի առաջ խուզարկել էին Արմեն Այվազյանի ղեկավարած բաժինը: Նրան ու իր ենթականերին դարձյալ բերման էին ենթարկել ու քրեական վարույթ էր հարուցվել: Քննիչների կասկածները վերաբերում էին համայնքին պատկանող հողատարածքների վարձակալության գործընթացներին: Մինչ օրս, սակայն, այս գործով մեղադրյալներ չկային:

Այվազյանը մի ուրիշ՝ կաշառքի գործով էր մեղադրյալ դարձել անցած տարեվերջին: Նա ձերբակալվել, հետո ազատ էր արձակվել: Դրանից հետո նա իր դիմումի համաձայն ազատվեց աշխատանքից, ու համայնքապետի պաշտոնակատար Արկադի Փելեշյանը նրա փոխարեն այս պաշտոնին նշանակեց Այվազյանի կնոջը՝ Լիլիթ Հովսեփյանին: Վերջինս երեկ հրաժարվեց պատասխանել մեր հարցերին:

ԼՈՒՐԵՐ

ԴԱՏԱՊԱՐՏՎԵՑ ՑՄԱՀ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ

Մարտի 25-ին Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Արտավազդ Կարապետյանի վճռով ցմահ ազատազրկման է դատապարտվել Գեղարքունիքի մարզի բնակիչ Արմեն Օհանեսովը:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, վերջինիս նկատմամբ քրեական հետապնդում էր հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 5-րդ, 9-րդ կետերով:

Նա 2025 թվականի հոկտեմբերի 27-ին սպանել էր 2022թ. մարտի 23-ին ծնված անչափահաս տղա երեխային՝ նրան ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ:

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ խոշորացված համայնքի Ծափաթաղ բնակավայրին հարակից դաշտամիջյան հատվածում նա ձեռքով կոկորդից սեղմելու եղանակով սպանել էր երեխային, իսկ հետո մարմինը դաշտամիջյան տարբեր հատվածներում թաքցնելուց հետո տեղափոխել Ճամբարակ խոշորացված համայնքի Ձիլ բնակավայր տանող ճանապարհին հարակից դաշտամիջյան հատված եւ թողել: Երեխայի մարմինը հայտնաբերել էին նոյեմբերի 2-ին: Նշված արարքը հիմնավորված համարելուց հետո դատավոր Արտավազդ Կարապետյանի որոշմամբ կայացված դատավճռով նա դատապարտվեց ցմահ ազատազրկման:

Հիշեցնենք, որ նոյեմբերի 2-ին՝ մի քանի օր շարունակ որոնողական աշխատանքների արդյունքում Գեղարքունիքի մարզում հայտնաբերվեց հոկտեմբերի 27-ից որպես անհայտ որոնվող Ծափաթաղ գյուղի բնակիչ 3-ամյա Տիգրանի մարմինը: Փրկարարները, պարեկները ու ոստիկանները երեխայի դին հայտնաբերել էին Ծափաթաղ գյուղին հարակից Ձիլ գյուղի ցուցանակից մոտ 60 մետր հեռավորության վրա՝ դաշտամիջյան հատվածում:

ԵՐԿՈՒ ԱՆՁ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

Մարտի 24-ին՝ ժամը 14-ի սահմաններում, Համայնքային ոստիկանության Գավառի բաժնի եւ Քրեական ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության ծառայողները Գավառում հայտնաբերել եւ թմրանյութ պահելու, օգտագործելու եւ իրացնելու կասկածանքով ձերբակալել են Նորատուս գյուղի 38-ամյա երկու բնակչի:

Համայնքային ոստիկանության բաժին տեղափոխելիս տղամարդկանցից մեկը թղթե փաթեթ է նետել մեքենայի մեջ:

Գեղարքունիքի մարզային քննչական վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում իրականացված զննությամբ՝ մեքենայի սրահում հայտնաբերվել է մոտ 5 գրամ մարիխուանայով թղթե փաթեթը:

Կազմված փաստաթղթերը եւ ձերբակալվածները ներկայացվել են նախաքննական մարմին:

● *Մարտի 25-ից 26-ը բացահայտվել է 150 հանցագործություն, 4 դեպք՝ պաշտոնական լիազորությունների չարաշահման:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՈՉ ՄԻ ԱՍՈՒԼԻՍ

2018թ. ապրիլին Իջեւանում կայացած բազմամարդ հանրահավաքում Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ նոր Հայաստանում պաշտոնների չեն նշանակվելու խնամի-ծանոթ-բարեկամ (ԽԾԲ) սկզբունքով: Սակայն ինչպես Փաշինյանի մյուս խոստումները, այդ խոստումն էլ սուտ դուրս եկավ. Ն.Փաշինյանը բարձր պաշտոնների նշանակեց իր դասընկերներին, մանկության ընկերներին, համերկրացիներին: 2019թ. սեպտեմբերի 12-ին Ն.Փաշինյանը դասընկեր, իր ամուսնության քավոր Հայկ Ղալումյանին նշանակեց Իջեւան համայնքի ղեկավարի պաշտոնակատար, իսկ 2021թ. ապրիլի 8-ին՝ Տավուշի մարզպետ: 2026թ. ապրիլի 8-ին լրանում է Հ. Ղալումյանի՝ որպես մարզպետ պաշտոնավարման 5 տարին. այդ ընթացքում նա ոչ մի անգամ մամուլի ասուլիս չի անցկացրել: 2024թ. դեկտեմբերի 20-ին Հ. Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել, թե ինչու մամուլի ասուլիսներ չի անցկացնում: Տավուշի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արման Գեւորգյանի ստորագրությամբ պատասխանում նշված է. «Որպես մարզպետ՝ պաշտոնավարման ընթացքում ՀՀ Տավուշի մարզպետը պարբերաբար հարցազրույցներ է տվել լրագրողներին. միշտ հասանելի է բոլոր լրատվամիջոցների ու լրագրողների համար»: Տավուշի մարզպետը ձեւացրել է, թե չի հասկանում մամուլի ասուլիս կոչվածը, այն ինչով է տարբերվում լրագրողներին տված հարցազրույցներից: Մարտի 17-ին նույն խնդրի վերաբերյալ նոր հարցում եմ արել մարզպետ Ղալումյանին. «Ապրիլի 8-ին լրանում է որպես մարզպետ Ձեր պաշտոնավարման 5 տարին, ե՞րբ եք նախատեսում Ձեր առաջին մամուլի ասուլիսը տալ: Լրագրողներին տված հարցազրույցները մամուլի ասուլիս չեն»: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են, որ այդ հարցի պատասխանը նախկինում ինձ տրվել է:

ՎԱԽԵՆՈՒՄ ԵՆ

Մարտի սկզբին Նոյեմբերյան քաղաք Նիկոլ Փաշինյանի եւ բարձրաստիճան այլ ՔՊ-ականների նախընտրական այցի ժամանակ Ռուսաստանում գործարարությամբ զբաղվող նոյեմբերյանցի Միեր Մաճկալյանը էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանին եւ մյուս պաշտոնյաներին հայտնել է, որ ինքը եւ Ռուսաստանում գործարարությամբ զբաղվող իր ընկերները ցանկանում են Նոյեմբերյանում ներդրումներ անել, հանգստի գոտիներ, հյուրանոցներ կառուցել, սակայն մտահոգված են, որ իրենց ներդրումները կարող են հայտնվել վտանգի տակ: Միեր Մաճկալյանը որպես դրա օրինակ է նշել Նոյեմբերյան քաղաքի բնակիչ, գործարար Քաջիկ Անանյանի կողմից կառուցված «խելացի անասնաշենքը», որի շինարարության մեջ որոշ տեխնիկական թերությունների պատճառով կառավարությունը հրաժարվել է կառույցը ճանաչել որպես «խելացի անասնաշենք», դրանում համապատասխան չափով ֆինանսավորում անել: Մ.Մաճկալյանն ասել է, որ կարելի էր գործարարին խորհուրդ տալ, շտկել անասնաշենքի փոքր թերությունները, ոչ թե այն մերժել ամբողջությամբ: Հանդիպմանը ներկա Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը փորձել է մեղմել իրավիճակը, Մ.Մաճկալյանին առաջարկել առանձին հանդիպել իր հետ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՈՒՅՍ ՈՒՆԵՆ

ԵՄ–Ն ԾՐԱԳԻՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

ԵՄ պաշտոնյաները հույս ունեն կրկնել Մոլդովայի «հաջողության պատմությունը» Հայաստանում: Այս մասին նրանք նշել են «Ազատություն ազատ Եվրոպա»-ի հետ զրույցում:

Պարզ չէ, թե արդյոք հիբրիդային արձագանքման խումբը կվերադառնա Հայաստան ընտրությունների ամսաթվին մոտենալուն պես, սակայն գարնան սկզբին այն կներկայացնի զեկույց, որը կուղղորդի Բրյուսելի հաջորդ քայլերը Երեւանի նկատմամբ:

Սա կարող է ներառել ԵՄ լիարժեք քաղաքացիական առաքելություն Հայաստանում՝ փոխարինելու ԵՄ ներկայիս առաքելությանը՝ EUMA-ին, որը ստեղծվել է 2023 թվականին՝ Ադրբեջանին հարակից Հայաստանի սահմանամերձ տարածքներում կայունությանը նպաստելու համար: Սակայն նման առաքելությունը կարիք կունենա ԵՄ բոլոր 27 անդամ պետությունների միաձայն աջակցությանը:

Հիբրիդային արձագանքման խմբի՝ ԵՄ դիվանագիտական կորպուսի հետ զուգահեռ, Եվրոպական արտաքին գործողությունների ծառայությունը նաեւ ԵՄ անդամ պետություններին բաժանել է ավելի երկար փաստաթուղթ՝ վերնագրված «Քաղաքական շրջանակ ճգնաժամային մոտեցման համար Հայաստանի վերաբերյալ» (PFCA):

28 էջանոց ֆայլը, որին ծանոթացել է ռադիոկայանը, կողմ է արտահայտվում «Ընդհանուր անվտանգության եւ պաշտպանության քաղաքականության» (ԸԱՊՔ) նոր առաքելության ստեղծմանը՝ նշելով. «ԵՄ-ի կենսական շահերից է բխում զարգացնել Հայաստանի հետ երկկողմ հարաբերությունները եւ նպաստել ներքին եւ տարածաշրջանային կայունացմանը, մասնավորապես՝ Հայաստանին բեւեռացնող արտաքին միջամտություններից ազատելու միջոցով: Այս նպատակով պետք է ուսումնասիրվեն ԸԱՊՔ տարբերակները՝ ԵՄ-ի առկա գործիքները լրացնելու եւ (հայ-ադրբեջանական) խաղաղության գործընթացի ամրապնդմանը զուգընթաց՝ ԵՄ-ի ներկայիս ԸԱՊՔ առաքելության հնարավոր փուլային դադարեցման նպատակով»:

Հոդվածում հստակեցվում է, որ Մոսկվան Բրյուսելի գլխավոր հակառակորդն է Հայաստանում: Այն նշում է, որ «Ռուսաստանն ուժեղացրել է իր հարկադրական դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ՝ Երեւանի ԵՄ-ի նկատմամբ աստիճանական վերակողմնորոշման ֆոնին՝ շահագործելով Հայաստանի խորը տնտեսական կախվածությունը եւ տարածաշրջանային անվտանգության փխրուն միջավայրը»:

Փաստաթղթում թվարկված «անկայունացնող մարտավարությունները» գազի գների բարձրացման եւ ընտրողական առեւտրի դանդաղեցման ռուսական սպառնալիքներն են, ապատեղեկատվական արշավները, կիբեռհարձակումները եւ «հոգեբանական գործողությունները (PSYOP)՝ ընտրական ամբողջականության եւ տարածաշրջանային կայունության նկատմամբ վստահությունը խաթարելու համար»:

Նշվում է, որ Կրեմլը «կցանկանար օգտագործել Ադրբեջանի, Թուրքիայի եւ Իրանի հետ առկա լարվածությունն ու վախերը, ինչը ավելի է բարդացնում տարածաշրջանային պատկերը եւ խաղաղության գործընթացի ընթացքը»:

Չնայած վերջին տարիներին Երեւանը դիմել է ԵՄ-ին, այդ թվում՝ հույս ունենալով որոշակի պահի ազատականացնել վիզային ռեժիմը եւ մի օր դիմել դաշինքին միանալու համար, փաստաթուղթը հստակ պատկերացում է տալիս այն մասին, թե որքան սերտորեն է երկիրը դեռեւս կապված Մոսկվայի հետ:

Այն նշում է, որ «Հայաստանը շարունակում է մեծապես կախված լինել Ռուսաստանից անվտանգության, տնտեսության եւ էներգետիկայի ոլորտներում»: Բացի այդ՝ թվարկված են որպես աշխարհաքաղաքական գործոններ, որոնք պետք է հաշվի առնել:

Տնտեսական առումով՝ կան հստակ ցուցանիշներ, որ Մոսկվայի ազդեցությունը Հայաստանում մնում է զգալի: Հայաստանը Ռուսաստանի գլխավորած Եվրասիական տնտեսական միության անդամ է, ինչը Մոսկվային դարձնում է երկրի հիմնական էներգամատակարարը եւ ամենամեծ առեւտրային գործընկերն աշխատուժի եւ միգրացիայի սերտ կապերով: Ռուսական ընկերությունները նաեւ վերահսկում են Հայաստանի գազի, երկաթուղու եւ հեռահաղորդակցության խոշոր ենթակառուցվածքները: Փաստաթուղթը նաեւ զարմանալիորեն անկեղծ է այն մասին, թե ինչ կարող է կորցնել ԵՄ-ը, եթե չակտիվացնի իր համագործակցությունը Հայաստանի հետ: Այն զգուշացնում է, որ Բրյուսելը կարող է «նվազեցնել ԵՄ ազդեցությունը հիմնական գործընթացների վրա՝ ներառյալ խաղաղության պայմանավորվածությունների իրականացումը, Հայաստանի անվտանգության բարեփոխումների ձեւավորումը եւ նրա ավելի լայն ռազմավարական կողմնորոշումը», եթե այն չհամապատասխանեցնի աջակցության քաղաքական հայտարարությունները կոնկրետ գործողությունների հետ:

Կրկին մտավախություն կա, որ Ռուսաստանը կմիջամտի, եթե Բրյուսելը չմիջամտի: Փաստաթուղթն ավարտվում է հետեւյալ կերպ. «ԵՄ-ը կկորցնի պատմական հնարավորությունը, որը թույլ կտա տարածաշրջանային դերակատարներին ազատվել Մոսկվայի գրկից տարածաշրջանում Ռուսաստանի թուլության պահին»:

ԹՈՒՐՔ ՆԱԽԱՐԱՐԸ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է

Թուրքիայի տրանսպորտի եւ ենթակառուցվածքների նախարար Աբդուլքադիր Ուրալօղլուն պատմել է «Զանգեզուրի միջանցքի» ուղղությամբ տարվող աշխատանքների ընթացքի մասին: Ինչպես հայտնում է APA-ն, նախարարը նշել է, որ թուրքական հատվածում արդեն սկսվել է ճանապարհի 224 կիլոմետրանոց հատվածի վերանորոգումը:

«Ադրբեջանական կողմում աշխատանքները մոտենում են ավարտին: Զանգեզուրի միջանցքի վերաբերյալ պայմանագիրը ստորագրվել է, սակայն շինարարական աշխատանքները դեռ չեն սկսվել: Կարծում եմ՝ մոտ ժամանակներս դրանք կսկսվեն առանց լուրջ հապաղումների: Նախիջեւանյան կողմում կա 180 կիլոմետր երկարությամբ հատված. դրա մի մասը կվերանորոգվի, մի մասը՝ կկառուցվի նորից: Մեր կողմում՝ 224 կիլոմետր երկարությամբ հատվածում, շինարարական աշխատանքներն արդեն սկսվել են»,- հայտարարել է նախարարը:

Հիշեցնենք, որ խոսքը տրանսպորտային նախագծի մասին է, որը պետք է Միջին Ասիան եւ այնուհետեւ Չինաստանը միացնի Սեւծովյան տարածաշրջանին: Սակայն թուրք նախարարի տերմինաբանությունը բազմաթիվ հարցեր է առաջացնում: Նախիջեւան-Հայաստան-Ադրբեջան հատվածում իրականացվող նախագիծը Բաքվում անվանում են «Զանգեզուրի միջանցք», իսկ Հայաստանում Սյունիքով անցնող հատվածը ստացել է «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության եւ բարգավաճման» (TRIPP) անվանումը: Հայաստանի իշխանությունները ադրբեջանական «Զանգեզուրի միջանցք» անվանումը փորձում են բացատրել նրանով, որ սահմանակից ադրբեջանական շրջանները «նույնպես Զանգեզուր են»: Բայց թե ինչպես է Թուրքիան հավակնում մասնակցություն ունենալ «-Զանգեզուրի միջանցքին», կարելի է բացատրել բացառապես տարածքային հավակնություններով:

● *Մարտի 25-ից 26-ը բացահայտվել է անձնական ունեցվածքի գողության, գույքը ոչնչացնելու կամ վնասելու 2-ական դեպք:*

IDBANK

TOON EXPO–Ի ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՍՏԱՆԱԼ 1% IDCOIN

IDBank-ը մասնակցում է TOON EXPO 2026-ին եւ մարտի 27-29-ը ներկայանալու է հիփոթեքային վարկերի շահավետ առաջարկներով, անակնկալ նվերներով եւ պատրաստ օգնելու գնել ձեր երազանքների բնակարանը:

Անշարժ գույքի եւ կառուցապատման ոլորտի միջազգային ամենամեծ եւ մասշտաբային ցուցահանդեսին. TOON EXPO-ն այցելուներին եւ մասնակիցներին հնարավորություն է տալիս ծանոթանալու 100-ից ավելի ընկերությունների հետ կառուցապատման, անշարժ գույքի գործակալության, բանկային համակարգի, մատակարարման ոլորտներից, օգտվել շահավետ առաջարկներից, որ գործելու են հենց ցուցահանդեսի ընթացքում:

IDBank-ի թիմն էլ իր տաղավարում կպատասխանի ձեր բոլոր հարցերին, կօգնի երբեմն բարդ ու անորոշ թվացող գործընթացն առավել պարզ, արագ ու հեշտ դարձնել, հասկանալ՝ ինչի՞ց սկսել եւ ինչպե՞ս ճիշտ համակարգել հիփոթեքային վարկով բնակարան ձեռք բերելու գործընթացը:

Բացի այդ, Բանկը հաճախորդների համար ունի մեծ անակնկալ:

Այն հաճախորդները, ովքեր TOON EXPO-ի ընթացքում Բանկի տաղավարում կդիմեն գնման, կառուցապատման կամ վերանորոգման հիփոթեքային վարկի ստացման համար, կստանան Բանկի կողմից հաստատված վարկի գումարի 1%-ի չափով idcoin (հարկումից հետո):

Իսկ Բանկի հիփոթեքային վարկերին առավել մանրամասն կարելի է ծանոթանալ այստեղ, գտնել ձեզ ամենահարմարն ու նախընտրելին եւ դիմել վարկի ստացման համար Բանկի հենց TOON EXPO-ի տաղավարում՝ օգտվելով նաեւ բացառիկ առաջարկից:

TOON EXPO-ն տեղի կունենա մարտի 27-ին, 28-ին եւ 29-ին, ժամը՝ 11:00-21:00, Մերիդիան ցուցահանդեսային կենտրոնում (Ոսկերիչների 1):

Հիշեցնենք, որ idcoin-ները հնարավոր է օգտագործել Idram&IDBank հավելվածում եւ Idplus լոյալության հարթակում QR վճարում կատարելու միջոցով (1 idcoin = 1 դրամ):

Ընկերությունները վերահսկվում են ՀՀ ԿԲ կողմից (Գ)

ԱՄԵՐԻԱԲԱՆԿ Գ

60 ՄԼՆ ԱՄՆ ԴՈԼԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Ամերիաբանկը 60 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսավորում է տրամադրել Firebird AI ընկերության կողմից արհեստական բանականության տվյալների կենտրոնի կառուցման նախագծին՝ մեկնարկելով ՀՀ տնտեսության համար կարեւորագույն նախագծի ֆինանսավորման գործընթացը:

Firebird, NVIDIA եւ Dell Technologies ընկերությունների, ինչպես նաեւ Հայաստանի կառավարության համագործակցության արդյունքում կառուցվող տվյալների կենտրոնը դառնալու է տարածաշրջանում ամենահզորը: Այն հնարավորություն կտա գիտահետազոտական հաստատություններին, տեխնոլոգիական ընկերություններին եւ ձեռնարկություններին մեծ ծավալով գործարկելու ժամանակակից ԱԲ տեխնոլոգիաները՝ ամրապնդելով Հայաստանի առաջատար դիրքերը աշխարհի տեխնոլոգիական քարտեզում:

Ամերիաբանկը շարունակում է մնալ Հայաստանի ամենախոշոր կորպորատիվ ֆինանսավորողը՝ առաջարկելով անհատական ֆինանսական լուծումներ Հայաստանում գործող տեղական եւ միջազգային ընկերություններին: Բանկի կորպորատիվ պարտավորությունների պորտֆելը՝ ներառյալ լիզինգը եւ ֆակտորինգը, գերազանցում է 1 տրիլիոն դրամը, ինչն աննախադեպ ցուցանիշ է Հայաստանի բանկային համակարգում:

Ամերիաբանկի մասին

Ամերիաբանկը ֆինանսական եւ տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը: Թվային փոխակերպման ռազմավարության ներքո բանկը ներդնում եւ շարունակաբար կատարելագործում է շուկայում եզակի պրոդուկտներ, ծառայություններ եւ նորարարական հարթակներ, որոնք միտված են բավարարելու մարդկանց ֆինանսական եւ ոչ ֆինանսական կարիքները: Ամերիաբանկը, որպես դինամիկ զարգացող ֆինթեք միջավայր, առաջարկում է կյանքի որակը բարելավող ամբողջական լուծումներ:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ԼՈՒՐԵՐ Գ

ԿՀԱՄԱԼՐՎԵՆ ՆՈՐ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄՈՎ

Այսուհետ Telcell Terminal-ների միջոցով բանկային հաշիվների եւ քարտերի համալրումը հնարավոր կլինի միայն այն դեպքում, երբ հաճախորդը անցնի պարտադիր նույնականացում:

«Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն՝ տերմինալների միջոցով բանկային հաշիվներին եւ քարտերին փոխանցումներ կատարելիս հաճախորդները պետք է անցնեն պատշաճ նույնականացում: Հակառակ դեպքում բանկերը չեն ընդունի գործարքները:

Ինչպես հայտնի է, մարտի 19-ից բանկերը դադարեցրել են առանց նույնականացման կատարվող վճարումների ընդունումը: Այս փոփոխություններին համապատասխան՝ «Թել-Սել» ընկերությունը մշակել է լուծումներ՝ ապահովելու իր տերմինալների անխափան աշխատանքը:

Ներկայումս արդեն հասանելի է դրանցից մեկը՝ Telcell Wallet հավելվածի միջոցով QR կոդի սկանավորումը, որը հնարավորություն է տալիս նույնականանալ:Ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ Լիանա Հունանյանի տեղեկացմամբ՝ առաջիկա օրերին տերմինալները կհամալրվեն նոր գործիքակազմով, որը կապահովի նույնականացման տարբեր հնարավորություններ:

ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ ԵՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ

Հարգելի՛ գործընկերներ եւ հաճախորդներ,

Տեղեկացնում ենք, որ մեր հաճախորդների հարմարավետությունն ապահովելու եւ ժամանակը խնայելու նպատակով «Թել-Սել»-ի բոլոր վճարամիջոցներով վերականգնվել են «Թիմ Տելեկոմ Արմենիա» բջջային կապի օպերատորի ծառայությունների դիմաց վճարումները:

Շնորհակալություն մեզ հետ մնալու եւ մեր ծառայություններից օգտվելու համար:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲ ընկերությունը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԶՐՈՒՅՑ

ԿՅԱՆՔԻ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՓՈՒԼԵՐԻՑ ՄԵԿԸ

ArmLur.am-ը զրուցել է դերասանուհի Եվա Բաղդասարյանի հետ մայրության եւ կանացիության մասին:

-Եվա, կասե՞ք՝ Դուք նշո՞ւմ եք կանանց տոնը, եւ եթե այո՝ ինչպե՞ս:

-Այո՛, սովորաբար բոլոր տոները նշում ենք՝ Վալենտին, մարտի 8, ապրիլի 7: Հավաքվում ենք մտերիմներով որեւէ ժամանցային վայրում եւ նշում:

-Ի՞նչ է Ձեզ համար կանացիությունը, եւ ո՞րն է Ձեր կանացի ուժի գաղտնիքը:

-Կանացիությունը իմ ուժն է՝ լինել եւ փափուկ, եւ ուժեղ միաժամանակ: Դա իմ ինքնավստահությունն է, իմ սահմանները եւ իմ արժեքների գիտակցումը: Իմ ուժի գաղտնիքը ինքս ինձ ճանաչելն է եւ չվախենալը՝ լինել իրական ես:

-Եվա, Դուք նոր եք դարձել մայր: Սա Ձեզ համար կանացիության ի՞նչ փուլ է, եւ ի՞նչ տպավորություններով կկիսվեք մեզ հետ:

-Մայրությունը ինձ համար կյանքի ամենակարեւոր ու պատասխանատու փուլերից մեկն է: Դա անվերապահ սիրո, նվիրումի ու ինքնազոհության ճանապարհ է, որտեղ դու սովորում ես ոչ միայն երեխայիդ, այլ նաեւ ինքդ քեզ նորից ճանաչել:

-Կասե՞ք՝ մայրանալը որեւէ կերպ ազդե՞լ է Ձեր եւ Ձեր մայրիկի հարաբերությունների վրա, արդյոք ավելի եք գնահատում Ձեր մայրիկին:

-Ինչպես ասում են՝ մինչեւ ծնող չես դառնում, ծնողին չես հասկանում: Իմ դեպքում դեռ այն փուլն է, որ սկսել եմ հասկանալ մայրիկիս: Ինը ամիս հղիություն, ծննդաբերություն եւ անքուն գիշերներ... Հիմա, երբ ինձ շատ է օգնում, ավելի ու ավելի եմ գնահատում նրան:

-Որպես վերջաբան՝ պատասխանեք, խնդրում եմ՝ կա՞ն կանացիության այն դետալները, որոնց վրա ավելի շատ եք ուշադրություն դարձնում հագուստում եւ աքսեսուարներում:

-Կանանց վրա առաջին հերթին ուշադրություն եմ դարձնում խնամված մաշկին:

Զրուցեց ԱԼԼԱ ԹՈՎՄԱՍՅԱՆԸ

ՏՐՎԵԼ Է ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ԵՐԿԱՄՍՅԱԿԻ ՄԵԿՆԱՐԿԸ

Հայաստանում Ֆրանկոֆոնիայի երկամսյակի մեկնարկը տրվել է Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը՝ հնագույն երաժշտության «Տաղարան» համույթի «Ֆրանկոֆոնիկ տաղարան» խորագրով համերգով: Այս մասին հայտնել են ՀՀ ԿԳՄՄՆ-ից:

Համերգին ներկա են եղել ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, նախարարի տեղակալներ Արթուր Մարտիրոսյանը եւ Դանիել Դանիելյանը, ԱԳ նախարարի տեղակալ Ռոբերտ Աբիսողոմոնյանը, ՀՀ-ում Բելգիայի Թագավորության դեսպան, ՀՀ-ում ֆրանկոֆոն դեսպանների խմբի նախագահ Էրիկ դե Մույնքը, ֆրանկոֆոն երկրների դեսպաններ, պաշտոնատար այլ անձինք:

Ազդարարելով Հայաստանում Ֆրանկոֆոնիայի երկամսյակի մեկնարկը՝ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը ողջունել է ներկաներին եւ նշել. «Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության հետ համագործակցությունը Հայաստանի արտաքին քաղաքականության կարեւոր ուղղություններից է, որն ամրագրված է նաեւ ՀՀ Կառավարության հնգամյա ծրագրում: Ուրախությամբ պետք է նշեմ, որ 2027 թվականի Ֆրանկոֆոնիայի մարզամշակութային խաղերը կանցկացվեն Երեւանում. Հայաստանի Հանրապետությունը կհյուրընկալի ավելի քան 50 պատվիրակության շուրջ 4000 մասնակցի»:

Այս տարվա միջոցառումները միավորվում են խորհրդանշական խորագրի շուրջ՝ «Հայաստան - Ֆրանկոֆոնիա. լեզու, մշակույթ, խաղաղություն եւ համերաշխություն»: Այս ուղերձը, ըստ նախարարի, լիովին արտացոլում է այն արժեքները, որոնք միավորում են ֆրանկոֆոն համայնքը եւ որոնց հավատարիմ է նաեւ Հայաստանը:

ԿԳՄՍ նախարարն ընդգծել է՝ ֆրանսերենը միայն լեզու չէ. այն նաեւ մշակույթների հանդիպման, երկխոսության եւ համերաշխության տարածք է:

«Մեր երկիրը շարունակաբար զարգացնում է կրթական, մշակութային եւ գիտական համագործակցությունը ֆրանկոֆոն գործընկերների հետ՝ նպաստելով ֆրանսերենի տարածմանը, երիտասարդության կրթությանը, մշակութային փոխանակումների ընդլայնմանը եւ գիտության ոլորտում համատեղ նախաձեռնությունների իրականացմանը»,- ելույթում ընդգծել է նախարարը:

Նա փաստել է՝ այս տարի ընդլայնվել է ֆրանկոֆոն միջոցառումների եւ ծավալը, եւ աշխարհագրությունը. կազմակերպվում են աննախադեպ մեծ քանակի՝ ավելի քան 1150 միջոցառումներ Երեւանում եւ բոլոր մարզերում: Երկամսյակը հագեցած է լինելու բազմաբնույթ նախաձեռնություններով՝ համերգներով, ցուցահանդեսներով, կինոդիտումներով, գիտաժողովներով եւ կրթական ծրագրերով, որոնք կնպաստեն ֆրանկոֆոն մշակույթի ավելի լայն ճանաչմանը Հայաստանում եւ նոր կապերի ստեղծմանը:

Ժաննա Անդրեասյանը հատկանշական է համարել, որ միջոցառումների մեկնարկը նշվում է երաժշտությամբ. «Այսօրվա համերգը՝ «Ֆրանկոֆոնիկ տաղարան» համերգային ծրագիրը, ներկայացվում է հնագույն երաժշտության «Տաղարան» համույթի կատարմամբ:

Երաժշտությունը, ինչպես եւ լեզուն, ունի մարդկանց միավորելու բացառիկ ուժ: Այն համամարդկային լեզվով միավորում է մարդկանց եւ ստեղծում մշակութային երկխոսության յուրահատուկ միջավայր: Վստահ եմ, որ այս երկամսյակը կդառնա նոր գաղափարների, ստեղծարար համագործակցության եւ բարեկամության ամրապնդման հարթակ: Թող այն եւս մեկ անգամ ընդգծի, որ լեզուն, մշակույթը եւ արվեստը կարող են դառնալ խաղաղության եւ համերաշխության ամուր հիմք»,- եզրափակել է խոսքը նախարարը՝ շնորհակալություն հայտնելով բոլոր կազմակերպիչներին, գործընկեր կառույցներին եւ արվեստագետներին կարեւոր նախաձեռնության իրականացման համար:

Ելույթներով հանդես են եկել նաեւ ԱԳ նախարարի տեղակալ Ռոբերտ Աբիսողոմոնյանը եւ ՀՀ-ում Բելգիայի Թագավորության դեսպան, ՀՀ-ում ֆրանկոֆոն դեսպանների խմբի նախագահ Էրիկ դե Մույնքը: Համերգի ընթացքում հնչել են ֆրանսիացի կոմպոզիտորների ստեղծագործություններ. գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր՝ ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Սեդրակ Երկանյան, մենակատարներ՝ Թերեզա Ոսկանյան. երգեհոն՝ Գալինա Ցոլակյան. սոպրանո (միջազգային մրցույթների դափնեկիր):

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԻ ԳԱՎԱԹ

Հայաստանի բռնցքամարտի հավաքականը մեծաքանակ թիմով Ծաղկաձորում շարունակում է տարվա առաջին ուսումնամարզական հավաքը:

Բռնցքամարտիկները պատրաստվում են ապրիլի 20-26-ը Բրազիլիայում կայանալիք Աշխարհի գավաթի խաղարկությանը: Թիմը ծանրաբեռնված ֆիզիկական մարզումային փուլ է անցկացնում, որը կավարտվի մարտի 31-ին:

Ապրիլի 4-ից հավաքականը եւս մեկ հավաք կունենա, հայտնում էՀայաստանի բռնցքամարտի ֆեդերացիան:

ԿԱՐՃ ԾՐԱԳՐՈՒՄ 8–ՐԴՆ ԵՆ



Հայաստանի ներկայացուցիչներ Կարինա Ակոպովան եւ Նիկիտա Ռախմանինը բավական հաջող են նշել իրենց նորամուտը գեղասահքի Աշխարհի առաջնությունում՝ վստահ ու մրցունակ ելույթ ունենալով ուժեղ կազմ ունեցող մրցաշարում:

Պրահայում ընթացող առաջնության սպորտային զույգերի պայքարում հայազգի գեղասահորդները հանդես են եկել Արցախ ստեղծագործության ներքո, ինչն ավելացրել է նրանց ելույթի էմոցիոնալ ազդեցությունը: Նրանք վաստակել են 67.12 միավոր եւ զբաղեցրել 8-րդ հորիզոնականը՝ բավական բարձր դիրք գրավելով փորձառու մրցակիցների շրջանում: Այս արդյունքը հնարավորություն է տալիս շարունակել պայքարը եւ բարելավել դիրքերը հաջորդ փուլում:

Հատկանշական է, որ ընդամենը մեկ ամիս առաջ Իտալիայի Միլանում կայացած Օլիմպիական խաղերում Ակոպովան եւ Ռախմանինը հանդես էին եկել ավելի համեստ արդյունքով: Այն ժամանակ նրանք կարճ ծրագրում վաստակել էին 66.27 միավոր եւ զբաղեցրել 12-րդ տեղը, իսկ ընդհանուր հաշվարկով ավարտել մրցույթը 14-րդ հորիզոնականում: Ներկայիս մրցաշարում գրանցված առաջընթացը վկայում է զույգի կայուն զարգացման եւ մարզավիճակի բարելավման մասին:

Ընդհանուր առմամբ, հայկական գեղասահքը շարունակում է աստիճանաբար ամրապնդել իր դիրքերը միջազգային ասպարեզում՝ ցույց տալով խոստումնալից արդյունքներ եւ զարգացման դրական միտում:

● *Ապրիլի 4-ին՝ ժամը 19:00-ին, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Կարմինա Բուրանա» սիմֆոնիկ կանտատի ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Հարեւանս իր դարասպին տեսախցիկ է տեղադրել ու նկարահանում է իմ տան մուտքը: Ի՞նչ լուծում կարող եմ տալ:

Մանե Դավթյան, 35 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Վիդեո եւ տեսանկարահանող սարքավորումների օգտագործումը եւ այդ տարբերակով անձի վերաբերյալ տեղեկության հավաքումն առնչվում է անձի անձնական, ընտանեկան կյանքը հարգելու իրավունքին: Այս իրավունքը պաշտպանված է Մարդու իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի 8-րդ հոդվածով, ինչպես նաեւ ՀՀ Սահմանդրությամբ: ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր եւ ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունք, եւ այս անձեռնմխելիությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով, այն էլ՝ բացառիկ դեպքերում: Ավելին, յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք: Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ այլ իրավաչափ ամանքի առկայության պարագայում: Մասնավոր տարածքն այն տարածքն է, որտեղ անձի/անձանց հասանելիությունը սահմանափակվում է օրենքով կամ տվյալ տարածքի սեփականատիրոջ որոշմամբ: Մասնավոր տարածքը պաշտպանված է պետական մարմինների, ֆիզիկական անձանց ցանկացած տեսակի, այդ թվում՝ վիդեոտեսանկարահանման միջամտությունից: Անձի կողմից իր մասնավոր տարածքում տեղադրված տեսախցիկը կարող է տեսանկարահանել հանրային տարածքը, սակայն եթե այդ տեսանկարահանումն առնչվում կամ ներառում է մեկ այլ անձի մասնավոր տարածքը, ապա դա արգելվում է: Ձեր մասնավոր տարածքը ներառող տեսանկարահանումը, օրինակ՝ Ձեր տան մուտքը կամ պատուհանը, կարող է իրականացվել միայն Ձեր համաձայնությամբ: Ի՞նչ անել այն դեպքում, երբ Դուք Ձեր մասնավոր տարածքը ներառող վիդեոտեսանկարահանման համար համաձայնություն չեք ներկայացրել: Անհրաշեշտ է դիմել հարեւանին կամ վիդեոտեսանկարահանումը տնօրինող անձին եւ պահանջել, որ վիդեոտեսանկարահանումն իրականացվի այնպես, որ դա չներառի Ձեր մասնավոր տարածքը: Եթե Ձեր պահանջը չի իրականացվում, ապա անհարժեշտ է դիմել ՀՀ արդարադատության նախարարության «Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն»՝ խնդրելով հարուցել վարչական վարույթ, եւ պարտավորեցնել Ձեր հարեւանին վերցնելու Ձեր մասնավոր տարածքը ներառող վիդեոտեսանկարահանումը: Այդ նպատակով անհրաժեշտ է, նախ, մի քանի անկյուններից նկարել տեղադրված տեսախցիկի դիրքը, նկարել այնպես, որ նկարի մեջ երեւա, որ տեսախցիկի տեսադաշտում է գտնվում նաեւ Ձեր տունը, տան մուտքն ու ելքը կամ պատուհանը, որից հետո անհրաժեշտ է այդ լուսանկարները կցել դիմում-բողոքին:

Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ես աշխատանքից ազատվել եմ, բայց վերջին աշխատավարձս ու վերջնահաշվարկս չեն տալիս: Ի՞նչ կարող եմ անել:

Լուսինե Անդրեասյան, 38 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Գործատուն աշխատողին աշխատանքից ազատելու մասին հրամանն ընդունելուց հետո եռօրյա ժամկետում պարտավոր է նրան տրամադրել աշխատանքից ազատելու մասին հրամանի մեկ օրինակը եւ աշխատանքից ազատման օրը աշխատողին վճարել վերջնահաշվարկի գումարները, այդ թվում՝ չվճարված բոլոր աշխատավարձերը:

Ընդ որում, գործատուի կողմից վերջնահաշվարկի կամ աշխատավարձի գումարները ժամանակին չվճարելու կամ ուշացմամբ վճարելու բոլոր դեպքերում աշխատողն իրավունք ունի գործատուից պահանջել տույժեր: Տույժերը հաշվարկվում են յուրաքանչյուր ուշացված օրվա համար չվճարված գումարի 0,15%-ի չափով:

Եթե աշխատանքից ազատելուց հետո գործատուն չի վճարել Ձեր աշխատավարձը եւ վերջնահաշվարկի գումարները, ապա.

Դուք կարող եք նրան գրավոր դիմում-պահանջ ներկայացնել՝ պահանջելով վճարել Ձեզ վերջնահաշվարկի եւ աշխատավարձի գումարները: Դիմում-պահանջն անհրաժեշտ է ներկայացնել գրավոր կարգով եւ այն ուղարկել գործատուին փոստային ծառայության միջոցով՝ պատվիրված եւ հետադարձ ծանուցմամբ:

Հետադարձ ծանուցագիրը անհրաժեշտ է պահպանել, քանի որ դա այն միակ ապացույցն է, որով կարող եք հետագայում հաստատել, որ գործատուն ստացել է Ձեր դիմում-պահանջը:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե նշված ժամկետի ընթացքում գործատուն կրկին չվճարի պահանջված գումարները, ապա Դուք կարող եք դրանք բռնագանձելու պահանջով դիմել դատարան՝ միաժամանակ պահանջելով գործատուից բռնագանձել նաեւ տույժի գումարները: Դատարան դիմելիս Դուք ազատված կլինեք դատարան դիմելու համար պետական տուրքի վճարումից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Խոշոր հրդեհ Երեւանում՝ հայտնի «Կանազ» մշակույթի տանը. օգնության են հասել քաղաքապետարանի ջրատարները:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	0 + 4 + 5 + 10
	Կոտայքի լեռներ	0 + 3 + 5 + 9
	Կոտայքի նախալեռներ	+ 5 + 7 +8 + 11
	Գեղարքունիք	0 + 3 + 4 + 7
	Լոռի	+ 3 + 6 + 6 + 10
	Տավուշ	+ 3 + 6 + 8 + 11
	Արագածոտնի լեռներ	0 + 3 + 5 + 8
	Արագածոտնի նախալեռներ	+ 4 + 8 + 7 + 11

	Արարատ	+ 6 + 9 +10 + 12
	Արմավիր	+ 7 + 10 +10 + 13
	Վայոց ձորի լեռներ	0 + 3 + 5 + 8
	Վայոց ձորի նախալեռներ	+ 6 + 10 + 10 + 13
	Սյունիքի լեռներ	0 + 2 + 3 + 7
	Սյունիքի նախալեռներ	+ 2 + 6 + 8 + 11
	Սյունիքի հովիտներ	+ 7 + 10 +13 + 17
	Երեւան	+ 7 + 9 +10 +12

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **26.03.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*